

դարձ ֆինանսավորում հատուկ նախատեսված հաշվի վրա, որի կեսը առաջարկում ենք ուղղել ինովացիոն նախագծերի ֆինանսավորման դեպքում որպես պետական երաշխիք, քառորդ մասը՝ նպատակային ֆինանսավորում աշխատողների գիտելիքների կառավարման, քառորդ մասը՝ աշխատողների վերապատրաստման ուղղություններով:

Առաջարկում ենք նաև Ազգային ինովացիոն բանկի միջոցներով ֆինանսավորել ինովացիոն տեսանկյունից ակտիվ, Ազգային ինովացիոն բանկից ֆինանսավորում ներգրաված և որոշակիորեն կայացած ձեռնարկությունների բաժնետոմսերի նախնական տեղաբաշխումը տեխնոլոգիական բորսայում:

Այսպիսով, կարևորելով Հայաստանի Հանրապետության կայուն տնտեսական զարգացման ապահովման առումով գիտելիքահեն տնտեսության խթանումը, էապես արդիական են դառնում ինովացիոն գործունեության կայացման և զարգացման նպատակով դրա արդյունավետ և ներուժային ֆինանսավորման լուծումները, որտեղ մեծ դեր ու կշիռ պետք է ունենա պետությունը, որպես մի կողմից՝ ինովացիոն գործունեության ֆինանսավորման ենթակառուցվածքների և ինստիտուցիոնալ օրենսդրական հիմքերի ձևավորող, մյուս կողմից՝ այդ գործունեության անմիջական ուղղակի ֆինանսավորման մասնակից: Այս իմաստով գտնում ենք, որ Ազգային ինովացիոն բանկը կարող է հանդիսանալ ինովացիոն գործունեության ֆինանսավորման հիմնախնդիրների մեկտեղված լուծում Հայաստանի Հանրապետության օրինակով:

ՎԱՅԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

*ՀՀ ԳԱՍ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.*

ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Նախաբան:

Խորհրդային տնտեսակարգը սահմանում էր բոլոր ոլորտների պետական սեփականության և պետական շահի գերակայություն, որը բնականաբար հիմքեր էր ստեղծում պետության կողմից իր իսկ սեփականության նկատմամբ պարտադիր ապահովագրության պահանջներ սահմանելու համար: Ազատ տնտեսական հարաբերությունները ստեղծում են մասնավոր սեփականություն և մասնավոր շահ հասկացությունները, և անհրաժեշտություն է առաջանում հստակ պատկերացնելու այն սկզբունքները, որոնց հիման վրա կարելի է առանձնացնել պարտադիր ապահովագրության ենթակա անհրաժեշտ ուղղությունները:

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համաձայն. «... ապահովագրությունը Հայաստանի Հանրապետությունում կարող է իրականացվել կամավոր և պարտադիր ձևով: Պարտադիր ապահովագրության իրականացման դեպքերը, կարգը և պայմանները սահմանվում են առանձին օրենքով: Կամավոր ապահովագրությունն ապահովադրի կամավոր ցանկությամբ ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքելու միջոցով իրականացվող ապահովագրություն է: Պարտադիր ապահովագրությունը ապահովադրի կամքից անկախ ապահովագրողի հետ օրենքի ուժով ծագող հարաբերություններն են, որի տեսակները, պայմանները և իրականացման կարգը կարգավորվում են ՀՀ

քաղաքացիական օրենսգրքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և պարտադիր ապահովագրության մասին համապատասխան օրենքներով: ... Օրենքով կարող են նախատեսվել պետական բյուջեից հատկացվող միջոցների հաշվին քաղաքացիների կյանքի և ոչ կյանքի պարտադիր ապահովագրության դեպքեր (պարտադիր պետական ապահովագրություն):»:

Փաստորեն ՀՀ օրենսդրությունը սահմանում է կամավոր և պարտադիր ապահովագրության տեսակներ՝ պարտադիր ապահովագրության մեջ առանձնացնելով պարտադիր պետական ապահովագրությունը, որն իրականացվում է ի հաշիվ պետական բյուջեի միջոցների: Սակայն օրենսդրությունը կամ հայրենական մասնագիտական գրականությունը երբևէ չի առանձնացրել, թե որ անձնական կամ գույքային շահերի նկատմամբ պետության կողմից օբյեկտիվորեն կարող է սահմանվել պարտադիր ապահովագրության պահանջ կամ ինչպիսի սկզբունքների առկայությամբ կարող է ներդրվել պարտադիր ապահովագրության համակարգ: Բնականաբար հարց է ծագում՝ *ապահովագրության ո՞ր տեսակները կարող են լինել պարտադիր*: Ապահովագրության պարտադիր տեսակների վերաբերյալ քննարկում, հայեցակարգային մոտեցում, օրենսդրական կարգավորում և որևէ իրավական ակտ կամ փաստաթուղթ Հայաստանի Հանրապետությունում առ այսօր չի հրապարակվել, ուստի այս հարցը կարիք ունի որոշակի պարզաբանումների, ինչը հնարավորություն կտա նախանշել այն ուղղությունները, որոնց շրջանակներում կարող են կառուցվել պարտադիր ապահովագրության համակարգերը: Այս հոդվածում մենք կփորձենք վերհանել այն չափորոշիչները, որոնք թույլ կտան հետազայում սահմանել պարտադիր ապահովագրության տեսակներ:

Միջազգային իրավունքը պարտադիր ապահովագրության տեսակների ներդրումը հիմնավորում է երրորդ անձանց և հասարակական շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ այն դեպքում, երբ նրանց վնաս է հասցվել: Միջազգային պրակտիկայում համեմատաբար տարածված են պարտադիր ապահովագրության տեսակները, որոնք կապված են բարձր վտանգավորության աղբյուրների հետ: Շրջապատի և շրջակա միջավայրի նկատմամբ բարձր վտանգավորությունը կարող է պայմանավորվել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց գործունեությամբ: Ամենամասսայական կիրառություն ունեցող պարտադիր ապահովագրության տեսակը, որը կապված է բարձր վտանգավորության աղբյուրի հետ, համարվում է ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերի քաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրությունը: Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր պետություն ինքն է որոշում պարտադիր ապահովագրության տեսակների ցանկը: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է պարտադիր ապահովագրություն ներդնելու հետևյալ դեպքերը.

- եթե այդպիսի ապահովագրությունը կապված է քաղաքացու կամ կազմակերպության քաղաքացիական պատասխանատվության հետ, որը կարող է ծագել երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասների կամ այլ անձանց հետ կնքված պայմանագրերով ստանձնած պարտավորությունների խախտման արդյունքում,
- եթե այդպիսի ապահովագրությունը ենթադրում է երրորդ անձանց օգտին պայմանագիր կնքելու պարտավորություն՝ կապված նրա կյանքի, առողջության կամ գույքի ապահովագրության հետ՝ նշված գույքային շահերին վնաս պատճառելու դեպքում,
- եթե այդպիսի ապահովագրության իրականացումն ամրագրված է այն իրավաբանական անձանց պարտավորությունների մեջ, որոնք իրենց տնտեսական վարման կամ օպերատիվ կառավարման ներքո ունեն պետական կամ մունիցիպալ սեփականություն համարվող գույք:

Այն դեպքում, երբ ապահովադիր է պետությունը՝ ի դեմս իր լիազոր մարմինների, ընդ որում ապահովագրավճարի վճարումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին, ապա այդպիսի ապահովագրությունը կոչվում է պետական պարտադիր ապահովագրություն:

Համաշխարհային գրականության մեջ ձևավորված տեսական մոտեցումներ և դասակարգումներ:


Փորձենք ներկայացնել նաև համաշխարհային գրականության մեջ հայտնի կամավոր և պարտադիր ապահովագրության դասակարգումները և սկզբունքները: Դրանք ներառված են ըստ իրավական հատկանիշի ապահովագրության դասակարգման համակարգում, ընդ որում ապահովագրության մասն դասակարգումը տարածվում է ապահովագրության ցանկացած տեսակի դասակարգումներով սահմանված բոլոր ճյուղերի և ենթաճյուղերի վրա: Ապահովագրական ծառայությունները կարող են առաջարկվել պարտադիր և կամավոր պայմանների հիման վրա՝ համապատասխանաբար կամավոր և պարտադիր ապահովագրության իրականացման միջոցով:

Պարտադիր ապահովագրությունն իրականացվում է գոյություն ունեցող օրենսդրությամբ սահմանված չափանիշերի համաձայն, որի իրականացման կարգն ու ապահովագրության պայմանները սահմանվում են պարտադիր ապահովագրության վերաբերյալ ընդունված առանձին օրենսդրական ակտերով: Պարտադիր ապահովագրության տեսակները պայմանավորված են այն ընդունելու հասարակական նպատակահարմարությամբ և անհրաժեշտությամբ: Պարտադիր ապահովագրությունն իրականացվում է ամբողջ հասարակության կամ նրա մի մասի անձնական և գույքային շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով, և այն պետությանը հնարավորություն է ընձեռում որոշ ռիսկերի տեսակների գծով վնասների ֆինանսական պատասխանատվությունը հատուցել ապահովագրության միջոցով: Ապահովագրության պարտադիր տեսակը կամավորից տարբերվում է նրանով, որ պոտենցիալ ապահովադրի մոտ առկա է օրենքով սահմանված պարտավորություն իրականացնելու ապահովագրություն, իսկ ապահովագրողները մրցակցում են՝ ապահովադիրների օրենքով սահմանված ապահովագրության պայմանագիր կնքելու պարտավորությունն՝ իրենց միջոցով իրականացնելու համար:

Պարտադիր ապահովագրությունն իրականացվում է ապահովագրության պայմանագիր կնքելու միջոցով այն անձի կողմից, ում վրա օրենքով դրված է մասն ապահովագրություն իրականացնելու պարտավորությունը: Պարտադիր ապահովագրության չափանիշերից մեկը վերջինիս համընդհանրությունն, ինչը ենթադրում է, որ օրենքում ամրագրված բոլոր սուբյեկտները պարտավոր են կնքել ապահովագրության պայմանագրեր օրենքով սահմանված գույքային շահերի նկատմամբ:

Ապահովագրության պարտադիր ձևը հիմնվում է որոշակի սկզբունքների վրա (գծապատկեր 1)՝

Պարտադիր ապահովագրության սկզբունքները



Գծապատկեր 1. Սկզբունքներ, որոնց վրա հիմնված է պարտադիր ապահովագրությունը

1. *Պարտադիր լինելու սկզբունքը* հանգեցնում է նրան, որ ի տարբերություն կամավոր ապահովագրության տեսակների՝ այստեղ ապահովադիր և ապահովագրողի նախնական համաձայնության անհրաժեշտություն չի առաջանում, քանի որ պարտադիր ապահովագրությունը սահմանվում է օրենքով, համաձայն որի ապահովագրողը պարտավոր է ընդունել օբյեկտը ապահովագրության, իսկ ապահովադիրը՝ վճարել համապատասխան ապահովագրավճարներ:

2. *Պարտադիր ապահովագրության համակարգում ապահովագրության օբյեկտների ամբողջական ներգրավվածության (ընդգրկվածության) սկզբունքը:* Ապահովադիրը պարտավոր է ապահովագրության ներկայացնել պարտադիր ապահովագրության ենթակա բոլոր օբյեկտները, իսկ ապահովագրողը՝ ապահովագրել դրանք: Այդ պատճառով պարտադիր ապահովագրության համակարգերի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները, որպես կանոն, յուրաքանչյուր տարի ամբողջ երկրում իրականացնում են ապահովագրված օբյեկտների գրանցում ու ստուգում:

3. *Ինքնաշխատության սկզբունքը* տարածվում է օրենսդրությամբ նշված ապահովագրության բոլոր օբյեկտների վրա: Ապահովադիրը պարտավոր չէ ապահովագրական մարմիններում հայտարարել պարտադիր ապահովագրության ենթակա օբյեկտի մասին: Տվյալ գույքը ինքնաշխատ կերպով ներառվում է ապահովագրության ենթակա օբյեկտների ցանկում:

4. *Պարտադիր ապահովագրության գործողության սկզբունքը*, անկախ ապահովագրական վճարների մուծման հանգամանքից, ենթադրում է, որ եթե ապահովադիրը ժամանակին չի վճարել ապահովագրական վճարներն ամբողջությամբ կամ դրանց մի մասը, ապա չվճարված գումարներն ապահովադիրից գանձվում են դատական կարգով: Ապահովագրված գույքի վնասման կամ կորստի դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է ապահովագրավճարի չվճարված չափը մասհանելուց հետո:


5. *Պարտադիր ապահովագրության անժամկետության սկզբունքը* հիմնվում է այն հանգամանքի վրա, որ պարտադիր ապահովագրության օբյեկտը ապահովագրվում է այն օգտագործելու ամբողջ ժամանակահատվածի ընթացքում, այսինքն՝ այս սկզբունքը գործում է մշտապես, քանի դեռ ապահովադիրը օգտվում է ապահովագրված գույքից:

6. *Պարտադիր ապահովագրության համակարգում ապահովագրական ապահովվածության նորմավորման սկզբունքը:* Ապահովագրական գնահատման (ապահովագրական արժեքի

որոշման) և ապահովագրական հատուցումների իրականացման մեխանիզմների պարզեցման նպատակով սահմանվում են մեկ օրյեկտի գծով ապահովագրական գնահատման տոկոսային կամ բացարձակ արտահայտությամբ ապահովագրական ապահովվածության նորմեր:

Ինչ վերաբերում է անձնական ապահովագրության պարտադիր տեսակներին, ապա այն լիովին համապատասխանում է պարտադիր ապահովագրության բոլոր սկզբունքներին, բացառությամբ անժամկետության սկզբունքի:

Կամավոր ապահովագրությունն իրականացվում է Ապահովագրողի (Ապահովագրողների միության) կողմից «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի և այլ նորմատիվ ակտերի պահանջներով կազմված և հաստատված ապահովագրության կանոնների հիման վրա՝ Ապահովագրողի և Ապահովադրի միջև կնքված ապահովագրության պայմանագրով: Ապահովագրության կամավոր ձևը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա (գծապատկեր 2).



Գծապատկեր 2. Կամավոր ապահովագրության սկզբունքները

1. *Մասնակցության կամավոր սկզբունքը* երաշխավորում է ապահովագրության պայմանագրի կնքում ապահովադրի առաջին իսկ (նույնիսկ բանավոր) պահանջով և ցանկությամբ: Պետք է նշել, որ այս սկզբունքը առավելապես տարածվում է ապահովադրի վրա, քանի որ ապահովագրողը չի կարող մերժել ապահովադրին ապահովագրության պայմանագրի կնքման համար, եթե ապահովադրի ներկայացրած պայմաններն ու պահանջները չեն հակասում ապահովագրողի կողմից հաստատված ապահովագրության պայմաններին և կանոններին:

2. *Ընտրանքային ընդգրկվածության (ներգրավվածության) սկզբունքը* պայմանավորված է նրանով, որ ոչ բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձ ապահովադիրներն են ցանկանում մասնակցել ապահովագրական հարաբերություններին: Բացի դրանից, ապահովագրության պայմաններով կարող են սահմանվել նաև ապահովագրության պայմանագրի կնքման հետ կապված ապահովադիրների և ապահովագրված անձանց սահմանափակումներ, օրինակ՝ տարիքային, առողջական վիճակի սահմանափակումներ և այլն:

3. *Սահմանափակ ժամկետի սկզբունքի* էությունն այն է, որ ապահովագրության պայմանագրի սկիզբը և վերջը հստակ համաձայնեցվում են պայմանագրում: Ապահովագրական գումարի սահմաններում ապահովագրական հատուցում վճարվում է միայն այն դեպքում, եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել ապահովագրության պայմանագրի գործողության ժամանակահատվածում:

4. *Ապահովագրական վճարի մուծման միանվագ կամ տարաժամկետ սկզբունքը* սահմանում է, որ ապահովագրության պայմանագրի գործողության մեջ մտնելը կամ գործողության

շարունակականությունը պայմանավորված են միանվագ կամ ապահովագրական վճարի առաջին մասի վճարման հանգամանքով: Ապահովագրական վճարի հերթական մասի չվճարումը հանգեցնում է ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրողի ստանձնած պարտավորությունների դադարեցմանը:

5. *Ապահովագրական ապահովվածության սկզբունքի* վրա հիմնվում է ապահովագրական գումարի մեծությունը կամ ապահովագրական հատուցման չափը: Գույքային ապահովագրության դեպքում ապահովադիրն իր ցանկությամբ է որոշում ապահովագրական հատուցման չափերը, որոնք սակայն պետք է լինեն գույքի ապահովագրական գնահատման (ապահովագրական, իրական արժեքի) չափի շրջանակներում: Նման սահմանափակումներ չկան անձնական ապահովագրության մեջ. այստեղ ապահովագրական գումարը սահմանվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Սեփական ղեկավարումներ և ենթադրություններ:

Որպեսզի հասկանանք, թե հասարակական-տնտեսական կյանքում որ ռիսկերը կամ ռիսկային խմբերը կարող են լինել պարտադիր ապահովագրության առարկա, մենք փորձել ենք, ըստ օբյեկտի և վտանգավորության բնույթի, պայմանականորեն խմբավորել այդ ռիսկերը և կատարել որոշակի ենթադրություններ: Մասնավոր սեփականատիրական հարաբերությունները յուրաքանչյուր անհատի համար ուղեկցվում են մեր կողմից պայմանականորեն բաժանված հետևյալ խումբ ռիսկերով՝

1. անձի կողմից իր կյանքը և առողջությունն ապահովելու, պատշաճ ծերություն ստեղծելուն ուղղված միջոցառումների ընթացքում առաջացած ռիսկեր,
2. մասնագիտական գործունեություն ծավալելու ընթացքում առաջացած և հասարակությանը սպառնացող ռիսկեր,
3. ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու ընթացքում առաջացած և ինչպես սեփականատերերին, այնպես էլ հասարակությանը սպառնացող ռիսկեր,
4. խնայողություններ ձևավորելու և դրանք ներդնելու ընթացքում առաջացած ռիսկեր,
5. մասնավոր սեփականությունը, մասնավորապես անձնական և առևտրային նպատակներով օգտագործվող շարժական և անշարժ գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու հետ կապված ռիսկեր,
6. ռիսկեր, որոնք կապված են ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների գույքը տիրապետելու և օգտագործելու հետ:

Որպեսզի հասկանանք, թե վերոհիշյալ ռիսկային խմբերում որոնք կարող են լինել պարտադիր և որոնք կամավոր, մեր կողմից կատարվել են որոշակի ենթադրություններ: *Առաջին ենթադրությունն* այն հանգամանքն է, որ պետությունը չի կարող ազատ տնտեսական հարաբերություններում ստիպել հասարակությանը պարտադիր կերպով ապահովագրել իր անձնական կյանքը և ունեցվածքը. ունեցվածքը մասնավոր է, դրա ռիսկերը կրողները՝ սեփականատերերը, և համապատասխանաբար այդ ռիսկերի ապահովագրությունը դրանց սեփականատերերի կողմից մնան որոշում ընդունելու բացառիկ իրավասությունն է:

Երկրորդ ենթադրությունն այն է, որ պարտադիր ապահովագրության ենթակա են այն ուղղությունները և ռիսկերը, որոնք սպառնում են համընդհանուր հասարակության շահերին և կարող են ստեղծել սոցիալական խնդիրներ և լարվածություն,

Երրորդ ենթադրությունն այն է, որ պարտադիր ապահովագրության ենթակա են հասարակության այն անալաշտպան հատվածի շահերը, որոնք ունեն պետության կողմից մնան աջակցության կարիք՝ հատկապես նոր ձևավորվող ազատ տնտեսական հարաբերությունների ժամանակ,

Չորրորդ ենթադրությունը ելնում է ձեռնարկատիրական և մասնագիտական գործունեության ծավալման ընթացքում հասարակության նկատմամբ ստանձնած պատասխանատ-

վության պարտադիր ապահովագրության գաղափարից, այսինքն՝ հասարակական շահերի պաշտպանության տեսանկյունից պարտադիր ապահովագրությունը կարող է լինել որևէ գործողություն, մասնագիտական կամ այլ գործունեություն իրականացնելու համար պարտադիր նախապայման,

Հինգերորդ ենթադրությունը պայմանավորված է առանձին ոլորտներում պետության ռազմավարությամբ: Այստեղ խնդիրն այն է, որ առանձին դեպքերում թեպետ սկզբունքորեն որևէ հիմնավորում չունի տվյալ տեսակը պարտադիր դարձնելու գաղափարը (օրինակ՝ մասնավոր սեփականությունը կամ ձեռնարկատիրական գործունեությունը), սակայն պետությունը, ելնելով իր ռազմավարական նպատակներից, սահմանում է այնպիսի խթաններ (օրինակ՝ որևէ ապահովագրության տեսակի իրականացման դեպքում ապահովագրավճարների վճարմանը որոշակի մասնակցություն ունենալու միջոցով), որոնք նպաստում են կանավորության սկզբունքով այդ համակարգում ներգրավված բոլոր սուբյեկտների օբյեկտիվորեն ապահովագրության համակարգի ներգրավման գործընթացին՝ դրանով իսկ նպաստելով ապահովագրության նման համակարգերի կայացման գործընթացին,

Վեցերորդ ենթադրությունը պայմանավորված է հասարակությանը առանձին կատաստրոֆիկ ռիսկերի հետևանքներից ապահովագրելու անհրաժեշտությամբ (օրինակ՝ երկրաշարժ),

Յոթերորդ ենթադրությունը կապված է պետության կողմից այնպիսի ռիսկերի կառավարման անհրաժեշտության հետ, որոնք պայմանավորված են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների գույքը որևէ օրինական հիմքով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց օգտագործմանը և տիրապետմանը հանձնելու ընթացքում առաջացող վտանգների հետ:

Ամփոփում:

Օգտագործելով նախորդ բաժիններում կատարված վերլուծությունները և բերված ենթադրությունները՝ փորձենք սահմանել, թե մեր կողմից թվարկված ռիսկային խմբերից որո՞նք կարող են լինել պարտադիր ապահովագրության առարկա:

1. *Անձի կողմից իր կյանքը և առողջությունը, պատշաճ ծերություն ապահովելուն ուղղված միջոցառումների ընթացքում առաջացած ռիսկեր:*

Թեպետ այստեղ ռիսկերը ևս մասնավոր են, սակայն գոյություն ունի համընդհանուր ռիսկ և սոցիալական խնդիրների լուծման տեսանկյունից այն անհրաժեշտ մասով պաշտպանելու տրամաբանական անհրաժեշտություն, այն է՝

- հասարակության յուրաքանչյուր անդամ պետք է ապահովված լինի նվազագույն բժշկական ծառայություններով, որի իրականացման երկու հիմնական եղանակներն են՝ պետական պատվերի շրջանակներում տրամադրվող բժշկական ծառայություն և պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի շրջանակներում ապահովվող բժշկական ծառայություն,
- հասարակության յուրաքանչյուր անդամ կենսաթոշակային տարիքի ընթացքում պետք է ապահովված լինի կենսաթոշակի որոշակի նվազագույն չափով, որը պետք է կախված լինի իր աշխատանքային կենսագրության ընթացքում կատարված նվազագույն պարտադիր վճարների չափից:

Հետևություն: Անձի կողմից իր կյանքի և առողջության ապահովման և ծերության ընթացքում առաջացած ռիսկերը հասարակության յուրաքանչյուր անդամի ռիսկերի նվազագույն չափի պաշտպանության տեսանկյունից բժշկական ծառայությունների իրականացման և կենսաթոշակային ապահովագրության որոշակի նվազագույն չափերի ապահովման մասով պետության կողմից կարող են ապահովվել համապատասխանաբար բժշկական պարտադիր ապահովագրության և կենսաթոշակային պարտադիր ապահովագրության համակարգերի միջոցով: Պարտադիր ապահովագրության համակարգերում ներառված նվազագույն չափերը գերազան-

ցող մասով ռիսկերը այդ անձանց ցանկությամբ և նախաձեռնությամբ պետք է կարգավորվեն կամավոր ապահովագրության համակարգերի շրջանակներում:

2. Մասնագիտական գործունեություն ծավալելու ընթացքում առաջացած ռիսկեր:

Հասարակությունը պետք է պաշտպանված լինի մասնագիտական առանձին գործունեություն ծավալողների մատուցած ծառայություններից օգտվելու արդյունքում առաջացած բացասական ռիսկերից: Այստեղ սկզբունքորեն պարտադիր ապահովագրությունը կարող է լինել մասնագիտական որևէ գործունեություն իրականացնելու համար պարտադիր նախապայման (օրինակ՝ նոտարների, բժիշկների, գնահատողների մասնագիտական պատասխանատվության ապահովագրություն և այլն):

Հետևություն: Մասնագիտական գործունեություն ծավալելու ընթացքում թույլ տրված սխալների հետևանքով երրորդ անձանց կյանքին, գույքին կամ առողջությանը հասցված վնասները կարող են լինել պարտադիր ապահովագրության առարկա՝ նպատակ ունենալով պաշտպանել այդ ծառայություններից սպառողների շահերը:

3. Ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու ընթացքում առաջացած և ինչպես սեփականատերերին, այնպես էլ հասարակությանը սպառնացող ռիսկեր:

Ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացած և սեփականատերերին սպառնացող ռիսկերը ենթակա չեն պարտադիր ապահովագրության այն հիմնավորմանը, որ դրանք մասնավոր ռիսկեր են, այդ ռիսկերի դրական կամ բացասական արդյունքները կրողներ՝ մասնավոր անձինք, և հետևաբար այդ ռիսկերի բացասական հետևանքներն ապահովագրելու որոշումը նրանց բացառիկ իրավասությունն է: Ձեռնարկատիրական գործունեության ընթացքում հասարակությանը կամ շրջակա միջավայրին հասցված վնասները կարող են լինել որպես պարտադիր ապահովագրության տեսակ:

Հետևություն:

Ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու ընթացքում առաջացած և սեփականատերերին սպառնացող ռիսկերը սկզբունքորեն չեն կարող օրենքով պարտադրվել ապահովագրության, իսկ ձեռնարկատիրական գործունեության ընթացքում հասարակությանը, ձեռնարկության աշխատակիցներին կամ շրջակա միջավայրին հասցված վնասները կարող են լինել որպես պարտադիր ապահովագրության տեսակ:

4. Խնայողություններ ձևավորելու և դրանք ներդնելու ընթացքում առաջացած ռիսկեր:

Խնայողություններ ձևավորելու և ներդնելու հետ կապված ռիսկերը կապված են ֆինանսական միջնորդների կողմից դրանց ընդունման և տեղաբաշխման ռիսկերի հետ: Այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր շուկայական և մրցակցային խթանները, մասնավորապես՝ խնայողությունների ներդրումը, և այդ ներդրումների ֆինանսական միջնորդների կողմից տեղաբաշխումը կրկին առնչվում է մասնավոր ռիսկերի հետ, իսկ այդ ռիսկերի դրական կամ բացասական արդյունքները կրողները՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք, և հետևաբար նրանք պետք է կարողանան գնահատել իրենց ֆինանսական ներդրումները՝ արդյունավետության, եկամտաբերության, դիվերսիֆիկացիայի, վերադարձելիության և հուսալիության նկատառումներից ելնելով: Իսկ այդ խնայողությունները օգտագործողները պետք է օրենսդրությամբ ամրագրված չափանիշերի պահպանմամբ և իրենց կողմից ընտրված ռիսկերի կառավարման ռազմավարությամբ կատարեն ռեսուրսների արդյունավետ վերաբաշխում՝ պատշաճ կերպով պահպանելով իրենց կողմից ստանձնած պարտավորությունների կատարումը և դրանով իսկ ձեռք բերելով ֆինանսական միջնորդի բարի համբավ: Այս ամբողջ գործընթացում առաջացած բոլոր ռիսկերը կարող են կառավարվել մասն ապահովագրությամբ, սակայն ապահովագրություն իրականացնելու նախաձեռնությունը պետք է ելնի հենց այդ ռիսկերը կրողներից: Այնուհանդերձ պարտադիր ապահովագրություն իրականացնելու հետ կապված՝ պետությունը, այս ռիսկային շարքում ունի հասարակության որոշակի հատվածի շահերի

պաշտպանության անհրաժեշտություն: Դա հասարակության այն հատվածն է, որոնք փոքր խնայողություններ ունեցող ավանդատուներն են կամ փոքր ներդրումներ ունեցող ֆիզիկական անձինք և որոնք եկամտաբերության առաջարկվող գործոնից բացի ի վիճակի չեն գնահատելու իրենց ներդրումների արդյունավետությունը և անվտանգությունն ապահովող այլ գործոններ: Հասարակության այս հատվածի խնայողությունների կորուստը որևէ ֆինանսական միջնորդի սնանկացման դեպքում սովորաբար հանգեցնում է սոցիալական մեծ լարվածության, որը «Դոմինոյի բացասական արդյունավետությամբ» տարածվում է ամբողջ ֆինանսական համակարգի վրա:

Հետևություն:

Բացառությամբ փոքր խնայողություններ ունեցող ֆիզիկական անձանց շահերի պարտադիր ապահովագրության (երաշխավորման) համակարգի՝ խնայողություններ ձևավորելու և դրանք ներդնելու ընթացքում առաջացած մնացած ռիսկերը կարող են ապահովագրվել կամավոր կերպով և բացառապես այդ ռիսկերը կրողների նախաձեռնությամբ:

5. Մասնավոր սեփականությունը, մասնավորապես անձնական և առևտրային նպատակներով օգտագործվող շարժական և անշարժ գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու հետ կապված ռիսկերը:

Հետևություն:

Մասնավոր սեփականությունը, մասնավորապես անձնական և առևտրային նպատակներով օգտագործվող շարժական և անշարժ գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու հետ կապված ռիսկերը կարող են պարտադրվել ապահովագրության միայն մնացած օգտագործման, տիրապետման և տնօրինման արդյունքում երրորդ անձանց պատճառված հավանական վնասների գծով, իսկ սեփական վնասների ապահովագրությունը կրկին դրանք կրողների նախաձեռնությամբ իրականացվող կամավոր ապահովագրություն պետք է լինի: Մեր կողմից կատարված վեցերորդ եմթադրության տրամաբանությունից ելնելով՝ պետությունն իր կողմից վարվող ռազմավարությունից ելնելով և համակարգային ռիսկերից խուսափելու նպատակով կարող է առանձին կատաստրոֆիկ ռիսկերից պաշտպանել հասարակական և տնտեսական ցնցումները (օրինակ՝ անշարժ գույքի պաշտպանությունը երկրաշարժից, որը համակարգային ռիսկի վտանգ ունի)՝ պարտադիր ապահովագրության պահանջ սահմանելու կամ հենց իր կողմից մնացած ռիսկերի գծով օտարերկրյա ապահովագրական երաշխիքների ձեռքբերման միջոցով:

6. Ռիսկեր, որոնք կապված են ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների գույքը տիրապետելու և օգտագործելու հետ:

Նման իրավիճակներում միանգամայն ակնհայտ է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների գույքը ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից տիրապետելու և օգտագործելու արդյունքում կարող են ենթարկվել կորստի կամ վնասման ռիսկի՝ տարբեր տարերային աղետների, հրդեհների, օգտագործման ընթացքում առաջացած վտանգների և չկանխատեսված այլ իրադարձությունների արդյունքում: Դրա հետևանքով վտանգի տակ կարող են դրվել պետական սեփականություն համարվող միջոցները, իսկ դրանք տիրապետողների և օգտագործողների ռեսուրսները կարող են մաս չբավարարել այդ վնասները ծածկելու համար:

Հետևություն:

Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների գույքը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից տիրապետելու կամ օգտագործելու ժամանակահատվածում ենթակա են տարբեր տարերային աղետներից, հրդեհներից, օգտագործման ընթացքում առաջացած վտանգներից և չկանխատեսված այլ իրադարձություններից պարտադիր ապահովագրության: